ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԲՄԱՇՁԲ-22/3 ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգով վերականգնողական աշխատանքների (ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Հ. Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարանի նորոգման, ամրակայման աշխատանքներ) գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 28.03.2022թ. ժամը 15:00-ին Էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Հրանտ Հովսեփյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամներ՝	Լուսինե Իգիթյան /գնահատող/
	Սուրեն Շաքարյան /գնահատող/
	Արմինե Ստեփանյան /բացող/
	Վերգինե Սահակյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Արսեն Սողոմոնյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 ՀՀԿԳՄՍՆԲՄԱՇՁԲ-22/3 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՀՀԿԳՄՍՆԲՄԱՇՁԲ-22/3 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Էլ. Հասցեները
1	«ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ	artmashin@mail.ru
2	«Հազարաշեն» ԱԿ	hazarashen@gmail.com
3	«ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ» ՍՊԸ	hayreni-tun@mail.ru

3. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

4. Տվյալներ յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

4.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

5. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

5.1 Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները					
		«ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ		«Հազարաշեն» ԱԿ		«ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ» ՍՊԸ	
		Առաջարկված գինը, ՀՀ դրամ					
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ
1	118552590	96866129	116239355	110076976	110076976	102491787	122990145*

* Մասնակցի գնային առաջարկը գերազանցում է նախահաշվային գինը:

6. Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման մասին.

6.1 Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման արդյունքների արձանագրման նպատակով հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո, բայց ոչ ուշ քան 2022թ մարտի 29-ին, ժամը 15:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 29.03.2022թ. ժամը 15:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Հրանտ Հովսեփյան /գնահատող/

Հանձնաժողովի անդամներ՝ Լուսինե Իգիթյան /գնահատող/

Սուրեն Շաքարյան /գնահատող/

Վերգինե Սահակյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Սողոմոնյան

Բացակայում է՝ Արմինե Ստեփանյան /բացող/

7. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

7.1 **«Հազարաշեն» ԱԿ-ի** կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

7.2 **«ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ հայտով ներկայացված Ծավալաթերթ-նախահաշվի «Հիմքեր և միաձույլ ե/բ կոնստրուկցիաներ» բաժնի 40-րդ և «Ծածկեր» բաժնի 85-րդ տողերի «Քանակը» և «Միավոր գինը» սյունակների թվերի արտադրյալները չեն համապատասխանում «Գումարը» սյունակի թվերին, իսկ 2022, 2023 և 2024 թթ համար իրականացվելիք աշխատանքների ընդհանուր գները չեն համապատասխանում վճարման ժամանակացույցով ըստ տարիների ընդհանուր գնի համեմատ սահմանված կշիռներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

7.3 **«ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ Հավելված 1.3-ի 1.2 բաժնում սխալ են լրացված Հայտարարագիրը ներկայացնող անձի անուն-ազգանունը և նրա պաշտոնը, իսկ 4.5 բաժնում լրացված չէ 4.5.1 տողը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

8. Գնահատման գործընթացի կասեցման մասին.

8,1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել **«ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ-ին և «ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ» ՍՊԸ-ին** մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 7.2 և 7.3 կետերով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

9. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին.

9.1 Հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել 2022թ ապրիլի 1-ին, ժամը 12:00-ին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 6-րդ հարկ, 611 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5 դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 01.04.2022թ. ժամը 12:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Հրանտ Հովսեփյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամներ՝	Լուսինե Իգիթյան /գնահատող/ Սուրեն Շաքարյան /գնահատող/ Վերգինե Սահակյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Արսեն Սողոմոնյան
Բացակայում է՝	Արմինե Ստեփանյան /բացող/

10. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

10.1 **«ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ-ն և «ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ» ՍՊԸ-ն** սահմանված ժամկետում շտկել է գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

11. Գնահատման գործընթացի կասեցման և միաժամանակյա բանակցությունների կազմակերպման մասին.

11.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.17թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված ''Գնումների գործընթացի կազմակերպման'' կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և **«Հազարաշեն» ԱԿ-ին, «ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ-ին և «ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ» ՍՊԸ-ին** հրավիրել ներկայացված գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների ս.թ ապրիլի 5-ին, ժամը 12:00-ին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 6-րդ հարկ, 611 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 05.04.2022թ. ժամը 12:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Հրանտ Հովսեփյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամներ՝	Լուսինե Իգիթյան /գնահատող/ Սուրեն Շաքարյան /գնահատող/ Վերգինե Սահակյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Արսեն Սողոմոնյան
Բացակայում է՝	Արմինե Ստեփանյան /բացող/
«ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝	Մայիլյան Ռազմիկ

Բացակայում են «ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ» ՍՊԸ-ի և «Հազարաշեն» ԱԿ-ի ներկայացուցիչները:

12. Գնման գործընթացին հայտ ներկայացրած մասնակիցների հետ բանակցությունների վարման մասին.

12.1 «ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ» ՍՊԸ-ի և «Հազարաշեն» ԱԿ-ի ներկայացուցիչների բացակայության պատճառով, վերջիններիս հայտով ներկայացված գնային առաջարկները թողնել անփոփոխ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

12.2 Նիստին ներկա մասնակցի հայտով առաջարկված գների նվազեցման նպատակով կազմակերպել բանակցություններ՝ սահմանելով 5 րոպե տևողությամբ ժամանակ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

12.3 Միաժամանակյա բանակցությունների վարման համար սահմանված վերջնաժամկետի ավարտին «ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից նոր գնային առաջարկ չի ներկայացվել (հիմք՝ Հավելված 1):

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

13. Տվյալներ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

13.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝ բավարար գնահատված հատեր ներկայացրած մասնակիցներից.

1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ-ին (ընտրված մասնակից),

2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Հազարաշեն» ԱԿ–ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

13.2 Հիմք ընդունելով սույն արձանագրության 12.1 կետը՝ մերժել «ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ» ՍՊԸ-ի հայտը՝ գնային առաջարկը նախահաշվային գինը գերազանցելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

14. Գնահատման արդյունքների մասին.

14.1 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ ըստ որի <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակցին էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Հրանտ Հովսեփյան /նախագահ/

---------- Լուսինե Իգիթյան

---------- Սուրեն Շաքարյան

---------- Վերգինե Սահակյան

---------- Արսեն Սողոմոնյան /քարտուղար/

Հավելված 1

ՀՀԿԳՄՍՆԲՄԱՇՁԲ-22/3 ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգով վերականգնողական աշխատանքների (ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Հ. Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարանի նորոգման, ամրակայման աշխատանքներ) գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության

Բանակցությունների արդյունքում առաջարկված գները				
Չափաբաժին	Ծառայության անվանումը	Նախահաշվային գինը	«ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ	
			Առաջարկված գինը, ՀՀ դրամ	
			առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ
1	Վերականգնողական աշխատանքներ	118552590	96866129	116239355
Բանակցությունների ընթացքում առաջարկված գները				
Բանակցությունների ավարտին առաջարկված գները			96866129	116239355

«ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ-ի տնօրեն՝ **Մայիլյան Ռազմիկ**

05.04.2022թ